

6 մարտի 2020թ.

## Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № UGS-01 «5 ինքնավար արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի համար» մրցույթի վերաբերյալ 04.03.2020թ. ժամը 17:24 procurement@atdf.am էլ.փոստի հասցեով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1. Արդյո՞ք նվազագույն պահանջները միակ ընդունելի տարբերակն են: Կարո՞ղ ենք առաջարկել ավելի բարձր հզորությամբ արևային ՖՎ վահանակներ:

Պատասխան՝ ներկայացված են նվազագույն պահանջները, այսինքն դրանից ցածր պարամետրերով ՖՎ մոդուլները ընդունելի չեն, բարձր պարամետրերով և համապատասխանող նշված ստանդարտներին առաջարկությունները կդիտարկվեն:

Հարց 2. Ինվերտորի պահանջները ամբողջական են, եթե առաջարկեք ավելի ցածր հզորության ինվերտորներ որոնք կբավարարեն նշված ստանդարտներին կդիտարկվեն նաև ձեր առաջարկը:

Պատասխան՝ Մրցույթի հրավերի տեխնիկական առաջադրանքում ներկայացված ինվերտորներին ներկայացվող պահանջները ամբողջական են: Հայտատուի կողմից առաջարկված նշված ստանդարտներին բավարարող ավելի ցածր հզորության ինվերտորներ կընդունվեն գնահատմանը:

Հարց 3. Հնարավո՞ր է արդյոք միկրո-ինվերտորներով լուծում առաջարկել:

Պատասխան՝ Տես 2-րդ հարցի պատասխանը:

Հարց 4. Յուրաքանչյուր առանձին կայանի հզորությունը կարո՞ղ է տատանվել 1-2 կՎտ-ով՝ ելնելով կայանի սիմետրիայից:

Պատասխան՝ Յուրաքանչյուր կայան հաշվարկված է համապատասխան տվյալ սպառողի ծախսի, եթե տատանումը կլինի ավելացման ուղղությամբ կդիտարկվի ձեր առաջարկը:

Հարց 5. Արդյո՞ք բոլոր հինգ կայանների արևային ՖՎ վահանակները պետք է լինեն նույն տեսակի և նույն հզորության:

Պատասխան՝ Այո, դա տեխնիկական առաջադրանքի պահանջ է: